Verzeichnis der angewandten Abkürzungen.

Br. M. — St. Lane Poole, Catalogue of Oriental Coins in the British Museum I—X, London, 1875—1890.
Cas. — P. Casanova, Inventaire sommaire de la collection des monnaies musulmanes de S. A. la princesse Ismaïl, Paris 1896.
Dorn — B. Dorn, Inventaire des monnaies des Khalifes orientaux, St. Petersbourg 1877.
Erem. — Eremitage. So werden die Münzen bezeichnet, welche von der Eremitage in Leningrad nach Erscheinen von Markow's Katalog erworben worden sind.
Ghaz. — M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg 1903, dasselbe auch in der Zeitschr. für armen. Phil. II.
ИРАИМК — Известия Российской Академии Истории Материальной Культуры, Ленинград.
L. — J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris 1919.
Lav. — H. Lavoix, Catalogue des monnaies musulmanes de la Bibliothèque Nationale I, Paris 1887.
M. — А. Марковъ, Инвентарный каталогъ мусульманскихъ монетъ императорскаго Эрмитажа, С. Петербургъ 1896.
MSOS. — Mitteilungen des Seminars für orientalische Sprachen, Berlin.
N. — H. Nützel, Königliche Museen zu Berlin, Katalog der Orientalischen Münzen, I, Berlin 1898.
N. Chr. — Numismatic Chronicle, London.
N. Z. — Numismatische Zeitschrift, Wien.
Östrup — P. Hauberg et J. Östrup, Les monnaies de la trouvaille de Terslev (Mémoires de la Société des antiquaires du Nord, 1913), Copenhague 1913.
SBGEG — Sitzungsberichte der Gelehrten Estnischen Gesellschaft 1925.
Scherzl — P. Шерцль, Описаніе медалей и монетъ имп. харьковскаго университета, Харьковъ 1912.
T. — B. Тизенгаузенъ, Монеты восточнаго халифата, С. Петербургъ 1873.
Weyl, G. — A. Weyl, Verzeichnis der reichhaltigen Sammlung orientalischer Münzen des Fürsten G., Berlin 1885.
Zambaur, WG. — E. v. Zambaur, Kollektion Ernst Prinz zu Windisch-Grätz, Wien 1906.

—

Corrigenda zu Handes, Sp. 41—47.

Sp. 41 Z. 4 von unten lies ع statt ح
„ 42 „ 2 „ oben „ *ʿIrāq* statt *ʿJrāq*
„ 44 „ 2 „ „ „ *Ḫālids* statt *Hālids*
„ 46 „ 26 „ „ „ *hingeschickt* statt *hingerichtet*
„ 47 „ 3 „ „ „ *Marand* statt *Maraaa*
„ 47 „ 7 „ unten „ *Baʿīṯ* statt *Buʿīt*

In den Namen als richtige Transkription sind die folgenden zu berücksichtigen:
Aḏerbaiǧān, Ibn al Aṯīr, Ibn al Baʿīṯ, Balāḏurī, Buḫārāḫuḏāh, Harṯama, Warṯān, al Warṯānī, al Wāṯiq.

ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՑԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԻՑ*

Ա.

Հռոմէական Եկեղեցին նրա համար է կոչւում կաթոլիկ, որ նշանակում է ընդհանրական, որովհետեւ նա տարածուած է աշխարհիս ամէն կողմն, եւ բոլոր երկիրներում, բոլոր ազգերի եւ լեզուների մէջ իր մասնակցողներն ունի: Թէեւ Հռոմում հաստատուած, թէեւ լատինական հողի վրայ կենդրոնացած եւ գլխաւորաբար լատինական ցեղին պատկանող եկեղեցականների ձեռքով կառավարուած, բայց նրա հետ միութեան մէջ գտնուող բոլոր միւս եւրոպական եւ ոչ-եւրոպական ցեղերն ու լեզուներն պահում են իրենց ազգային ծէսը, լեզուն եւ աւանդութիւնները: Ոչ մի աշխարհական պետութիւն այնչափ բազմաթիւ երկիրների, ցեղերի եւ լեզուների ներկայացուցիչներ չունի իր մօտը, իր կենդրոնավայրում, որչափ Հռոմ, իբրեւ հոգեւոր բարձրագոյն իշխանութիւն: Եւ այդ բազմաթիւ, բազմալեզու ներկայացուցիչներն էլ ունին այնտեղ իրենց սեպհական եկեղեցական հաստատութիւններն, որտեղ զարգացնում են իրենց յատուկ լեզուն եւ այլ ցեղական առանձնայատկութիւններն, որոնք ամենեւին չեն խանգարում «միութիւնն՝ ընդհանուրի հետ» մի «ընդհանուր հովուի» վարչութեան ներքոյ:

Այս հաստատութիւնների շարքում փոքրաթիւ հայ-կաթոլիկ համայնքն էլ ունի իր շատ պատուաւոր տեղը: Դեռեւս կայսերական Հռոմը Piazza Colonnaյում կանգնած Մարկոս Աւրելիոսի կոթողի վրայ Հայանունը Պարթեւներից եւ Գերմաններից առաջ է արձանագրել. (Imperator Armenis, Parthis, German. եւ այլն): Պապերի Հռոմն էլ նոյնպէս համարեա թէ առանձնաշնորհեալ դիրք է ստեղծել Հայոցս համար: Հայկական հաստատութիւնը գրաւում է այնտեղ քաղաքի կենդրոնում ամենաբանուկ վայրը: նա տարածուած է երեք փողոցի վրայ: Այս պատճառով էլ, վերջերս, մերոնք խնդիրք են տուել Հռոմի Քաղաքային վարչութեան որ այն փողոցն, ուր գտնուում են հայ եկեղեցին եւ հաստատութիւնը՝ Via San Nicola da Tolentino, փոխէ իր անունն եւ կոչուի «Հայոց փողոց»: Քաղաքային Վարչութիւնը

* Հեղինակը այս ցիշողութիւնները կցած էր իւր «Ցարգանք հայ Նահատակին» յոդուածաշարքին: Ամբողջութեան համար կը հրատարակենք էջերուս մէջ անփոփոխ:
ԽՄԲ.

համակրանքով է վերաբերում այդ խնդիր-
քին, բայց փոքր ինչ տարբեր որոշում է
տալիս: Ի նկատի ունենալով, որ San Nicola
da Tolentino անունը կրում են ոչ միայն
գլխաւոր փողոցն այլ եւ իր ճիւղաւորում-
ներն եւ հրապարակը, որոնց խմբովին փո-
փոխումը գործնական տեսակէտից թիւրի-
մացութիւնների տեղիք կարող էր տալ, որո-
շում է դրա փոխարէն Հռոմում հետզհետէ
բացուող նոր հրապարակներից մէկը կոչել
Piazza degli Armeni, «Հայոց հրապարակ»:
Եւ ես ինչպէս անձամբ տեսայ, այժմ արդէն
պատրաստուելու վրայ է այդ հրապարակը:
Հռոմի հայ-կաթոլիկ հաստատութիւնն
ունի. 1. մի շքեղ եւ մեծ եկեղեցի յանուն
Ս. Նիկողայոսի, 2. երեքյարկանի ընդար-
ձակ դպրոցական շէնք, 3. պարտէզ եւ
4. շրջապատի կալուածներ, որոնց ճակատը
տարածուած է երեք փողոցի վրայ: Բացի
դրանցից քաղաքի ուրիշ մասերում ունի
դարձեալ 2 տուն. որոնք վարձու են տրւում
եւ մի փոքր եկեղեցի յանուն Ս. Վլասի:
Այս տներից մէկը, որին կից է այդ եկեղե-
ցին, ծառայում է իբրեւ ազգային հիւրանոց
յատկապէս Հռոմ եկող հայ-կաթոլիկ եկե-
ղեցականների բնակութեան համար: Այն-
տեղ է բնակւում այժմ Հռոմում հայկական
ծէսի ձեռնադրիչ Գոյումեան արքեպիսկո-
պոսը:
Այս Ս. Նիկողայոս եկեղեցին, որ այս-
պէս էր կոչւում արդէն Իտալիայի Տոլէն-
տինոյ քաղաքի հռչակաւոր մի սուրբի ա-
նունով, այնչափ ընդարձակ է, որչափ ամե-
նաբազմամարդ հայաբնակ քաղաքի, Թիֆ-
լիսի Հայոց Մայր եկեղեցին, «Վանքի եկե-
ղեցի» կոչուած: Երբ նա անցել է Հայոց
ձեռքն, մերոնց առաջին գործն է եղել աջա-
կողմեան մեծ խորանը յատկացնել այն Մեծ
Քարոզչին որ ազգով օտար, լեզուով օտար,
իր կեանքի նպատակ է ընտրել Հայաստան
գալով հայ ժողովուրդը լուսաւորել. եւ երբ
երկար տարիների տաժանական ջանքերից յե-
տոյ հասնում է իր նպատակին, նա հանգիստ
սրտով կրկնել է իր Տիրոջ խօսքը՝ «Ամենայն
ինչ կատարեալ է» եւ մահուանից էլ յառաջ
քաշուել է աշխարհից, քարանձաւի ճգնու-
թեան մէջ կնքելով իր առաքելական կեանքը:
— Հիմայ երկրորդ մի խորան էլ պիտի յատ-
կացուի նոր հայ երանելուն, Կոմիտաս Քէօ-
միւրճեանին:
Հայոց մեծագոյն սուրբին, Պարթեւ
Գրիգորին այս անհրաժեշտ յարգանքը մա-
տուցանելուց յետոյ, որչափ որ Հռոմի զա-
նազան եկեղեցիներում, զանազան ժամա-
նակներ թաղուած հայեր են եղել, բոլորի
տապանաքարերը հաւաքել, ամփոփել են
այստեղ: Այստեղ է թաղուած նաեւ առաջին
հայ կարդինալը Կ. Պոլսի կաթողիկոս-պա-
տրիարքը, Անտոն Հասունեան:
Շրջապատի մեծ կալուածները կանգ-
նուած են գլխաւորաբար վերջին տարինե-
րում: Հայ-կաթոլիկ նուիրապետութեան
այժմեան ներկայացուցիչը Հռոմում, յա-
ջողել է գտնել իտալացի վարձակալներ,
որոնք յանձն են առել իրենց ծախքով կա-
ռուցանել այժմեան շէնքերը, այնպիսի պայ-
մաններով, որ Հայ հաստատութիւնը այժ-
մէն իսկ ստանում է բաւարար եկամուտ, իսկ
10—15 տարի վերջը, շէնքերը բոլորովին
պիտի դառնան նրա սեպհականութիւնը,
որով նիւթական միջոցների կողմից փայ-
լուն ապագայ պիտի ունենայ: Հայ-կաթո-
լիկները մինչ երախտագիտութեամբ յիշում
են Լեւոն ԺԳ. մեծանուն քահանայապետին,
որ 1883ին նուիրել է նրանց թէ՛ եկեղեցին եւ
թէ՛ կից շէնքն ու ազատ ընդարձակ տեղը:
Ի յարգանս այս նուէրին է, որ Հռոմի հայ
դպրոցը կրում է Լեւոնեան Քահանայապե-
տական Հայկական Վարժարան անունը
(Collegio Pontificio Armeno Leonino):
Շատերը, նոյն իսկ շատ ազդեցիկ օտար
եկեղեցականներ Հռոմում, չափազանց են
գտել այդպիսի մեծ եկեղեցին եւ ընդարձակ
կալուածները փոքրիկ հայ-կաթոլիկ հա-
մայնքին, երբ ուրիշ կաթոլիկ ազգեր, ան-
համեմատ աւելի կարեւոր թէ իրենց թուա-
կան գերազանցութեամբ եւ թէ իրենց քա-
ղաքական դիրքովը զրկուած են համեմատա-
բար, ուստի քանիցս ջանացել են խլել այդ
բոլորը, եւ փոխարինել աւելի փոքր եւ
Հայոց դիրքին աւելի համապատասխան եկե-
ղեցիով եւ կալուածով, բայց վեհանձն
Պապը արձակել է իր անդառնալի վճիռը՝
«Մի դպչիք իմ դպրոցին» խօսքերով եւ
հայերը մնացել են վերջնական տէրերը:
«Հայկական Լեւոնեան Վարժարանը»
հաստատուած է Լեւոն ԺԳ.ի 1883 Մարտ 1ի
Առաքելական թղթովը, որի հայերէն թարգ-
մանութեան առաջին խօսքերն են «Բարե-
գութ ծնող մարդկան» (ինչպէս յայտնի է,
Պապերի առաքելական թղթերն որոշւում
են իրենց առաջին խօսքերովը), նպատակ

դնելով՝ «ի բնակութիւն ընիկ (այսինքն ի ծնէ) հայ պատանեաց ի Հռովմ քաղաքի»։ Ըստ այսմ այն հայ պատանիներն, որոնք պատրաստուում են հովուական պաշտօնին, ապրում են այնտեղ, ուր եւ ստանում են սկզբնական եւ հայերէնի ուսումն, իսկ Աստուածաբանութեան, Փիլիսոփայութեան եւ Իրաւաբանութեան դասերի համար յաճախում են Հռոմի բարձրագոյն դպրոցները։ Մինչեւ 1928, դպրոցը կառավարուում էր ժամանակաւոր կանոններով, երբ անցեալ տարի Հռոմում հաւաքուած հայ-կաթոլիկ եպիսկոպոսների ժողովը յատուկ կանոնագրութիւն մշակեց եւ ներկայացրեց «Արեւելեան Եկեղեցւոյ Ս. Ժողովի» հաստատութեան։ Այս կարդինալական ժողովն (Congrégation), որ հոգում է բոլոր արեւելածէս կաթոլիկների ներքին գործերը, քննելով եւ «ի սակաւս բարեփոխելով զայս Գիր Կանոնաց», ինչպէս ասուած է նրա 1929 Մարտ 27ին կայացած վճռի գրաբար թարգմանութեանը մէջ, «հաւանի եւ հաստատէ, առ ոչինչ գրելով, որ ինչ հակառակ սոցին ելանեն»։ Վճիռը ստորագրած են Ժողովի քարտուղարը (որ հաւասար է նախագահական պաշտօնի) կարդինալ Ալոյզիոս Սինչէրոյ եւ Աթոռակիցը (կամ օգնականը) Հ. Ճ. Զիքոնեանի [15]։ Կանոնագրութիւնը բաժնուած է 6 Յօդուածների (Գլուխ)։ Ա. Դպրոցի Մեծաւորին վերաբերեալ կանոններ. Բ. Փոխ-Մեծաւորին վերաբերեալ կանոններ. Գ. Հոգեւոր Հօր (խոստովանահայր) վերաբերեալ. Դ. Դպրոցի մատակարարին. Ե. Վերակացուաց եւ Զ. Դպրոցին պաշտօնէից եւ սպասաւորաց վրայ։ Վերջը դրուած է այն «երդման ձեւն», որ աշակերտները պարտաւոր են արտասանել. «Կը խոստանամ եւ կ'երդնում, որ եթէ այսպէս հաճոյ երեւայ դպրոցի մեծաւորաց (որ նշանակում է եթէ նրանք արժանի համարին), ինչպէս կը յուսամ շնորհիւն Աստուծոյ, եկեղեցական վիճակը պիտի ընդդրկեմ եւ սուրբ ասպիճանները եւ քահանայական կարգը պիտի ընդունիմ...։ Կ'ուխտեմ նաեւ եւ կ'երդնում, որ հրամանաւ Մեծաւորաց Դպրոցին՝ ըստ կարգաց եւ սահմանադրութեանց նորին՝ անյապաղ իմ վիճակս (թեմ) պիտի դառնամ եւ հոն ի սպասաւորութիւն այն վիճակին եւ Եպիսկոպոսին, վասն փրկութեան հոգւոց միշտ եւ հանապազ իմ աշխատանքս եւ ջանքս ի գործ պիտի դնեմ...։ Դարձեալ միշտ իմ աշխատութիւնս եւ ջանքս պիտի մատուցանեմ հոգւոց փրկութեան համար նաեւ եթէ Առաքելական Աթոռոյն հրամանաւը կրօնաւորական կարգ մը, ընկերութիւն մը կամ Միաբանութիւն մը մտնելու ըլլամ եւ անոնց միոյն մէջ ուխտ ալ ընելու ըլլամ։ Այսպէս օգնէ ինձ Աստուած եւ այս սուրբ Աւետարանս»։ Աշակերտների թիւն այժմ 22է։ Երբ նրանցից մէկը աւարտում է իր բարձրագոյն ուսումը, ձեռնադրւում է եպիսկոպոսը նրան ձեռնադրում է, հայ ծէսով ի հարկէ, եւ նա գնում է հովուելու այնտեղ, ուր եւ երբ որ պէտք է զգացւում։ Աշակերտներ ընդունւում են ամէն երկրից։ Նրանց մէջ կան 2 աշակերտ նաեւ Լեհաստանի հայերից, որոնց ուղարկել է Թեմական Առաջնորդ Թէոդորովիչ արքեպիսկոպոսն, որպէս զի հայերէն սովորին, հայ ծէսին ընտելանան եւ վերադառնան Լեհաստան, այդ ուղղութեամբ գործելու համար իրենց ազգակիցների մէջ, որոնք դարերից ի վեր Լեհաստանում բնակուելով ուծացել են հայութիւնից։

Դպրոցի վարչութիւնը կազմուած է երեք անձից, Մեծաւորը՝ Տ. Սարգիս Ծ. Վ. Տէր Աբրահամեան, Փոխ-Մեծաւորը Տ. Ֆրանչիսկոս Վ. Աղաջանեան, որ միեւնոյն ժամանակ համալսարանում Աստուածաբանութեան ուսուցիչ է, եւ Տ. Մկրտիչ Վ. Արզարեան, հմուտ լեզուագէտ։ Առաջին երկուքը կովկասցի են ծննդեամբ, իսկ վերջինը Պարսկաստանցի։ Սրանց երեքն էլ Հռոմումն են առած իրենց ուսումը։

Դպրոցն երկու մեծ դահլիճ ունի. մէկը վերեւ, քահանաների խուցին կից, սովորական ընդունելութիւնների համար, իսկ միւսը, ներքեւ, առաջին յարկում, հանդիսաւոր պարագաներում։ Այս վերջին սրահը կոչւում է «Սիւնհոդոսի դահլիճ», որովհետեւ այդտեղ են լինում «սիւնհոդոս»ներն, այն է հայ-կաթոլիկ եպիսկոպոսների ընդհանուր ժողովը Հռոմում։ Երկու անգամ է տեղի ունեցել այս ընդհանուր ժողովը. առաջինը 1911ին, Թէրզեան կաթողիկոս-պատրիարքի նախագահութեամբ եւ 19 եպիսկոպոսի մասնակցութեամբ, որի աւագ քարտուղարն էր հանդուցեալ բազմահմուտ հայր Գրիգորիս Վ. Գալէմքեարեան, Վիեննական Մխիթարեան։ Այս ժողովը մշակել

[15] Ես առիթ ունեցայ տեսակցելու Հռոմում այս համակրելի եկեղեցականի հետ, որից կախուած են իրապէս Հայոց վերաբերեալ գործերը։

է հայ-կաթոլիկ եկեղեցու կանոնական իրաւասանութիւնն եւ ծիսական հրահանգները: Ամբողջ 17 տարի յետոյ է դումարուել երկրորդ ընդհանուր ժողովը: Զատկանց տխուր հանգամանքներ էին տեղի ունեցած այս ժամանակամիջոցում. 1914—1918ի պատերազմի սարսափելի աղէտը մահուան մանգաղ էր շարժել Թիւրքիայի հայ ժողովրդի վրայ, առանց դաւանութեան խտրութեան: Հայ-կաթոլիկ պատրիարքութիւնը համարեա թէ կորցրել էր իր գոյութեան իրաւունքը Թիւրքիայում[16]: Թրքական անագորոյն հալածանքը 290 հոգեւորականից միայն 126ին էր կենդանի թողել: Կրօնաւորական կարգերին պատկանող 175 անձից 47 հոգի ուղղակի նահատակ էին դարձել իրենց քրիստոնէական կրօնին հաւատարիմ մնալով: Ժողովրդից կենդանի մնացողները ցրուել էին զանազան երկիրներ, առանձնապէս Սիւրիայում հաւաքուելով: Պատերազմից յետոյ Կ. Պոլսում այլ եւս պատրիարք չէր նստում: Աթոռը ժամանակաւորապէս կառավարւում էր պատրիարքական տեղապահներով, որոնք «Առաքելական կառավարիչ» տիտղոսն էին կրում: Իրերի այս կացութեան դարման տանելու եւ սաստկապէս խախտուած նուիրապետութիւնը նոր, հաստատուն հիմքերի վրայ դնելու համար, ներկայ Պապի, Պիոս ԺԱ.ի կարգադրութեամբ դումարուել էր այս երկրորդ ընդհանուր ժողովը: Այս անդամ նախագահել է նոյն ինքն «Արեւելեան Եկեղեցւոյ Ս. Ժողովի Քարտուղարը» կարդինալ Սինչէրոյ. մասնակցել են Թէրզեան պատրիարք եւ 8 եպիսկոպոս: Ընդհանուր ժողովը կամ այս երկրորդ Սինհոդոսը՝ վճռել է պատրիարքական Աթոռը փոխադրել Կ. Պոլսից Բէյրութ, Ֆրանսական հովանաւորութեան տակ. միեւնոյն ժամանակ որոշուել են նաեւ նոր թեմական կազմակերպութիւններ:

Դահլիճի մէջ երկու կողմի պատերի վրայ շարուած են թէ առաջին եւ թէ երկրորդ Սինհոդոսին մասնակցողների պատկերներն, որ աւելորդ չեմ համարում յառաջ բերել, այն կարգով որ շարուած են եւ որ ոչ նուազ կարեւոր է, իւրաքանչիւրի տակի արձանագրութիւններով, որոնց մի քանիսը չափազանց բնորոշ են...:

1. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան, եպիսկ. Ադանայի 8 Սեպտ. 1892. ընտրուած է պատրիարք 23 Ապրիլ 1910:

2. Գերապ. Անտոն Պահապանեան, ընտր. եպիսկոպոս Կեսարիոյ 27 Օգոստ. 1911. բանտարկուած է եւ ապա աքսորուած թուրքերի ձեռքով իր կղերի եւ հօտի հետ 1915ին:

3. Գերապ. Յովհ. Գուզեան, ընտր. եպիսկոպոս Աղեքսանդրիոյ (Եգիպտոս) 27 Օգոստ. 1911.

4. Գերապ. Տ. Սարգիս Ծ. Վ. Տէր Աբրահամեան, ընտր. Առաքելական Կառավարիչ Ռուսաստանի կաթոլիկ Հայոց 1909:

5. Գերապ. Մատթէոս Սիպեան, եպիսկոպոս Կապպադովկիոյ 28 Օգոստ. 1901. վախճանած Կ. Պոլսում 1915ին:

6. Գերապ. Իգնատիոս Կիւրեղեան, արքեպ. Տրայանուպոլսոյ, ընտր. 2 Մայիս 1877 Ընդհ. Սրբոյ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան. վախճ. 1921:

7. Գերապ. Միքայէլ Խաչատրեան (ծն. Խարբերդ 1846) ընտր. եպիսկոպոս Մալաթիոյ 6 Փետր. 1899. բարբարոսաբար սպանուած է թուրքերի ձեռքով իր ժողովրդի հետ 1915ին:

8. Գերապ. Յարութիւն Ճամճեան. ընտր. եպիսկոպոս Մուշի 16 Սեպտ. 1884.

---

[16] Այս պատրիարքութիւնը հիմնուած է նախ Լիբանանում, 1742ին, «պատրիարք տանն Կիլիկիոյ» կոչումով: Նրա իրաւասութիւնը տարածւում էր նաեւ Միջագետքի, Պաղեստինի եւ Եգիպտոսի վրայ, ուր որ բնակւում էին կաթոլիկ հայեր, բայց Կ. Պոլսում եւ Փոքր-Ասիայի նահանգներում այս վերջինները դտնւում էին Կ. Պոլսի հայ-լուսաւորչական պատրիարքարանի հոգեւոր վարչութեան տակ: Երբ 1828ի ռուս-թրքական պատերազմի ժամանակ ընդհանուր հալածանք տեղի ունեցաւ, թիւրք կառավարութիւնը բոլոր կաթոլիկներին իրրեւ ֆրանկ, այսինքն իրրեւ օտար տէրութեան կրօնակից, հետեւարար եւ սրան համակիր ու «լրտես», սոսկալի նեղութիւններով հալածեցրեց Կ. Պոլսից դէպի երկրի ներքին դառները: Այս եղաւ նրանց արրած եւ արրելիք դառնութեան վերջին բաժակը: Պատերազմից անմիջապէս յետոյ Պիոս Ը. պապը ազգու կերպով միջամտեց եւ եւրոպական կաթոլիկ պետութիւնների ճնշման ներքեւ թրքական Բ. Դուռը ստիպուեց ոչ միայն ընդհանուր ազատութիւն՝ այլ եւ ինքնուրոյն հոգեւոր վարչութեան իրաւունք տալ: Այս կերպով 1830ին թրքահպատակ կաթոլիկ հայերը պաշտօնապէս դուրս եկան Գուսի Գափուի ներքեւ յատուկ պատրիարքարանի իրաւասութիւնից եւ հիմնեցին Կ. Պոլսում, որ 1866ին իրաւասութիւնը եւ հիմնեցին իրենց յատուկ պատրիարքական իշխանութիւնը: Այս միջոցին մի քանի Կիլիկիայի պատրիարքներ՝ Ս. Դառնալն» կամ Անտոն Հասունեան արքեպիսկոպոսի: Այս մի քանի տարի (հայերէն «Ի դառնալն» կամ «Մինչեւ դարձեալ») կոնդակի պատճառով նրանց հետ յանձին էր, որ Reversurus կոնդակի եկան, որոնց հետեւանքով Հասունեան հարկադրուեց հեռանալ ծանր խռովութիւններ յառաջ բերելով, մինչեւ վերջին աստիճանի հասնելով Սա. Ազարեան եւ Կ. Պոլսից եւ նրան յաջորդեցին Սա. Գալուստեան եւ ուրիշներ, կանոնաւոր կերպով, մինչեւ վերջին ատեանը: Պատրիարքական իշխանութեան դէպքերը: Պատրիարքական թեմական հետ միասին կաթոլիկ հայերը բազմաթիւ թեմական հոգեւոր վարչութիւններ էին կազմակերպել բոլոր Թիւրքիայում, որոնք այժմ նոյնպէս փոփոխուած են ենթարկուած:

տեղափոխուած է Բրուսա 1886ին. վախճ. 1916:

9. Գերապ. Յովսէփ Թէոդորովիչ. ընտր. արքեպիսկ. Լէմբէրգի (Լեհաստանի Հայոց) 16 Դեկտ. 1901:

10. Գերապ. Յուսիկ Կիւլեան, արքեպ. Մարաշի, 7 Սեպտ. 1902:

11. Գերապ. Ղեւոնդ Քէչէճեան, ընտր. արքեպ. Սեբաստիոյ 20 Յունիս 1907. վախճ. թրքական հալածանքներից 1916ին:

12. Գերապ. Պետրոս Գոյունեան, ընտր. եպիսկ. Աղեքսանդրիոյ, 20 Փետր. 1907, ապա արքեպ. տիտղոսաւոր Քաղկեդոնի, 17 Մարտ 1911:

13. Գերապ. Իգնատիոս Մալոյեան (ծն. Մէրդին 1878), ընտր. արքեպ. Մարդինի 27 Օգոստ. 1911: Թուրքերի ձեռքով անկարագրելի տանջանքների մատնուելով սպանուած է իր կղերի եւ հօտի հետ, 1915ին:

14. Գերապ. Ստեփան Իսրայէլեան (ծն. Մուշ 1866), եպիսկ. Խարբերդի 6 Փետր. 1899. թուրքերի ձեռքով սպանուած է իր կղերի, մայրապետների եւ ժողովրդի հետ, 1915ին:

15. Գերապ. Ցակ. Թօփուզեան (ծն. Պարտիզակ 1855) եպիսկ. Մուշի 27 Օգոստ. 1911: թուրքերի ձեռքով, քարիւղով կենդանի այրուած է 1915ին. իրեն հետ սպանուած են նաեւ իր կղերի եւ ժողովրդի մեծ մասը:

16. Գերապ. Գրիգոր Պահապանեան ընտր. 27 Օգոստ. 1911. եպիսկ. Անգորայի. բանտարկուած եւ աքսորուած է 1915ին, իր կղերի եւ ժողովրդի հետ:

17. Գերապ. Յովհ. Նազլեան, ընտր. եպիսկ. Տրապիզոնի 27 Օգոստ. 1911 (այժմ կաթողիկոսական Տեղապահ Բէյրութում):

18. Գերապ. Աւետիս Արփիարեան, ընտր. եպիսկ. Խարբերդի 23 Սեպտ. 1890. ապա արքեպ. Մարաշի 27 Օգոստ. 1911. թուրքերի ձեռքով տանջանքի է մատնուած 1915ին:

19. Գերապ. Օգոստինոս Սայեղեան, ընտր. արքեպ. Հալէպի 8 Սեպտ. 1902:

20. Գերապ. Գրիգոր Գովրիկեան, ընտր. արքեպիսկ. տիտղոսաւոր Մծբինի 28 Ապրիլ 1910. Ընդհ. Աբբայ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան:

21. Գերապ. Յովս. Ռոմոսեան, ընտր. արքեպ. տիտղոսաւոր Ակրիդայ, պատրիարքական փոխանորդ Կ. Պոլիս, 1911:

22. Գերապ. Անդրէաս Չէլէպեան (ծն. Մէրդին 1848) ընտր. եպիսկ. Դիարբէքիրի 6 Փետր. 1899. թուրքերի ձեռքով կենդանի թաղուած է 1915ին:

23. Գերապ. Յովսէփ Մելքիսեդեկեան, ընտր. եպիսկ. Էրզրումի 27 Օգոստ. 1911. տարագրութեան ժամանակ թուրքերից կրած տանջանքների հետեւանքից վախճանած է Կ. Պոլսում 1919ին:

Բացատրութիւնների հարկ չկայ:

Հռոմում մի ուրիշ հայ վանատուն էլ կայ, Վենետիկի Մխիթարեան Միաբանութեանը: Մխիթարեանները, որ արդէն իրենց սեպհական տունն ունէին քաղաքի կենդրոնում, այժմ նոր կալուած են դնել քաղաքի ծայրամասում, օդաւէտ տեղում եւ շինել վանատուն, փոքրիկ մատուռով եւ ամէն յարմարութիւններով: Մխիթարեան կղերացուները գալիս են այստեղ եւ յաճախում բարձրագոյն դպրոց: Աշակերտների թիւը բնականաբար փոփոխական է: Իմ այցելութեան ժամանակ (1929 Մայիս) այնտեղ 7 աշակերտ կար: Վանատան տեսուչը Հ. Տիմոթէոս Վ. Կիւլեան եւ օգնականը նորընծայ Հ. Սամուէլ Արամեան, ուսեալ եւ իրենց դերքին համապատասխան կրօնաւորներ են, երկուքն ալ Կովկասից:

Բ.

Հռոմ, այս Յաւիտենական Քաղաքն, ինչպէս իրաւամբ կոչւում է նա, իր մօտ 3000 տարուց գոյութիւնից յետոյ էլ դեռ այնչափ թարմ է եւ հրապուրիչ եւ մանաւանդ այնքան կարեւոր ու հետաքրքրական, որ անկարելի եմ գտնում հեռանալ այստեղից առանց մի ընդհանուր տեսութիւն անելու նրա այժմեան վիճակի եւ դերքի վրայ: Երեք որոշ մասի է բաժնուած Յաւիտենական Քաղաքը.

Ա. Հին Հռոմը, մեծազօր, աշխարհակալ Հռոմի թողած անմահ յիշատակներով:

Բ. Միջնադարեան Հռոմը, պապերի աշխարհական իշխանութեան ժամանակաշրջանն, որ այժմ համեստօրէն ներկայանում է իբր Վատիկանի Միջնաքաղաք (Cité du Vatican). եւ

Գ. Նորագոյն Հռոմ, որ իր ընդգրկած նոր քաղաքական-վարչական կազմութեամբն առանձին գոյն ու փայլ է տալիս նրան:

Փոխելով այս կարգն ես կը սկսիմ խոսիլ նախ վերջինիս վրայ:

Ապրիլ 21ին (1929) Վատիկանում տեղի ունեցած հանդէսից վերջը երբ դուրս ելայ քաղաք, ամբողջ Հռոմը տօնական դրօշակներով զարդարուած դտայ: Առանց բացառութեան բոլոր պատերը ծածկուած էին ֆաշիստական յայտարարութիւններով եւ բացագանչութիւններով: Քաղաքացիները հրաւիրուում էին մանաւանդ գոչել W (Viva) il Re, W il Duce (կեցցէ թագաւորը, կեցցէ Դուչէն՝ Մուսօլինին): Հազարաւոր մանուկներ եւ պատանիներ, balila եւ avanguardist, երկրի բոլոր ծայրերից հաւաքուած, աշխարհական սեւ շապիկով զգեստաւորուած եւ իրենց յատուկ դրօշակներով խումբ խումբ դիմում էին քաղաքից դուրս, այն մեծ հրապարակն, ուր Մուսօլինին, նրանց կուռքը, ձիու վրայ նստած, որպէս զի ամէնքը կարողանան նրան լաւ տեսնել եւ լսել, իր ողջոյնը, քաջալերանքն եւ միւս նոյն ժամանակ պատգամը պիտի ուղղէր Camicie Nereին (Սեւ Շապիկներ): Այն օրը, Ապրիլ 21ին Հռոմ քաղաքը տօնում էր իր ծննդեան, ինչպէս ասում են իտալացիք (Natale) տարեդարձը: Գրչի մի հարուածով, Մուսօլինին ջնջել էր Մայիս 1ի կարմիր դրօշակի օրն եւ նրա տեղ հաստատել այս հայրենասիրական օրը: Ըստ երեւոյթին փոքրիկ, բայց ըստ էութեան եւ մանաւանդ իր հետեւանքներովը շատ մեծ էր՝ կատարուած փոփոխութիւնը: Փոխանակ բանուորական դասակարգային տօնի, անդասակարգային հայրենասիրական տօն էին տօնում: «Հռոմի ծնունդը» յիշեցնում էր այսօրուան հռոմայեցիներին իրենց նախորդների փառահեղ անցեալ[illegible] Զէին մոռանում նրանք նաեւ այն էգ գայլին, որ իր կաթով սնուցել էր Romulus եւ Remus եղբայրներին: Քաղաքային վարչութիւնը հիմայ էլ խնամքով պահում է, ի յիշատակ այդ ազգանդութեան, մի էգ գայլ, որ այդ օրը, իր դառագեղի մէջ ընդհանուր ուշադրութեան առարկայ էր դարձել: Իսկ այն գեղեցիկ արձանն, էգ գայլն իր ստինքներից կախուած երկու մանուկով, որ հնագոյն Հռոմում զարդարում էր Կապիտոլի տաճարի աստիճանները, այժմ հանդստանում է թանգարանում:

Աշխարհակալ, հզօր Հռոմի յիշատակը մի մեծ խթան է դարձել այսօրուան հռոմայեցիներին, որ հանգիստ ու դադար չէ տալիս նրանց: Ոչ մի ջանք չէ խնայում մեծի ու փոքրի մէջ այդ գիտակցութիւնն ամրացնելու: Մինչեւ իսկ թանգարանների եւ հին յիշատակարանների մուտքը նորերս ազատ է հռչակուած, որպէս զի բոլոր իտալացիք անվճար կարողանան յաճախակի այցելել եւ պարծենալ իրենց նախնիների գործերովը: Եւ որքա՜ն մեծ զոհաբերութիւններ են անում այդ նախնիների օրինակին հետեւելու համար: Թէեւ պատմական Սկեւոլայի (Mutius Scaevola) նման նրանք իրենց ձեռքը կրակի մէջ չեն այրում, բայց դրա փոխարէն իրենց քրտինքով աշխատած ինչքերը դնում են հայրենիքի խորանի խարոյկի վրայ: Մի տարուան մէջ զանազան անձեր, ամէն դասակարգից, այս ձեւով իննհարիւր միլիոն ֆրանկի պետական արժէթղթեր են այրել Իտալիայի պետական պարտքը թեթեւացնելու համար:

Բայց հին Հռոմայեցիները իրենց ժամանակի ծանօթ աշխարհի մեծ մասի վրայ իշխում էին: Միջերկրականի շուրջը, համարեա ամբողջապէս նրանց տիրապետութեան տակ է գտնուել: Կարո՞ղ են արդի Հռոմայեցիները յուսալ թէ երբ եւ իցէ նրանք եւս այդ բարձրութեան կը հասնին: Անշուշտ ոչ. դէթ այժմեան քաղաքական պայմաններում իտալացիք անկարող են իրենց տէրութեան սահմաններն ընդարձակել: Մնում է ուրեմն բարոյական կամ մտաւորական ազդեցութեան տարածումը, որին ձեռնարկել են եւ յաջող կերպով տանում են յառաջ: Վաղուց է, որ գործում է արտասահմանում իրենց աշխարհահռչակ բանաստեղծի անունով՝ Dante Alighieri կոչուած ընկերութիւնը, նպատակ ունենալով տարածել իտալական մշակոյթը: Ահա 2 տարի է, հիմնուել է Pro Oriente (Արեւելքի համար) կազմակերպութիւնն, որ ճգնում է իտալական մտածելակերպը, լեզուն եւ արուեստը տարածել գլխաւորապէս Միջերկրականի շուրջը, Բալկանեան թերակղզում, Փոքր Ասիայում եւ նոյն իսկ Կովկասում: Իտալացի ժողովուրդը գիտակցում է այս նպատակի մեծութեան եւ ընդ առաջ է գնում նախաձեռնողների ձգտումին: Անցեալ տարի դրա համար մասնաւոր նուիրատուութիւններից հաւաքուել էր մէկ միլիոն լիրէ, իսկ այս տարի (1929) հանգանակութիւնը մօտեցել է չորս միլիոնի:

Գիտական շրջանում էլ իտալացիք աշխատում են ետ չմնալ իրենց հարեւաններից: Բարի նախանձից դրդուած Մուսոլինի հիմնեց Իտալիայի Ակադեմիան գաղղիական Académie Française-ի ծրագրով, մօտաւորապէս:

Իտալացիք աշխատում են նաեւ միջազգային գիտական աշխարհը գործակցութեան հրաւիրել իրենց Միջերկրականի ձգտումներին: Դրա համար էլ հաստատուեց Հռոմում այս տարի (1929) Յունիս 29-ին «Միջերկրական Հետազօտութիւնների Միջազգային Ընկերութիւնը» (Société Internationale des Recherches Méditerranéennes), որ նպատակ ունի հնագիտական պեղումներ կատարել այն բոլոր տեղերում՝ ուր որ կայսերական Հռոմն իր գերիշխանութիւնն էր տարածել:

Հռոմ մեծանում է անընդհատ եւ բնակչութիւնը բազմանում: Միմիայն վերջին 5 տարուայ ընթացքում 200·000 հոգի է աւելացել, թէեւ այս աճումն, ասում են, շատ դուր չէ գալիս Դուչէին (Մուսոլինի), որի նպատակն է գիւղական աշխատող ձեռքերը պահել գիւղերում, հողի մշակութեան համար եւ չթողնել, որ նրանք խմբուին քաղաքներում: Վերջին վիճակագրութեան համաձայն Հռոմի բնակիչների թիւը հասել է 1929 Մայիս 1-ին — 902·000-ի: Այս առթիւ իտալական լրագիրները հետաքրքրական տեղեկութիւններ են հաղորդում: Պատմութեան մէջ մի անգամ միայն այդ թիւը զերազանցուած է, այն է Օգոստոս կայսեր օրով, երբ հասել է 1,366·000-ի: Հռոմի քաղաքական անկումից յետոյ բնակչութիւնը սկսել է շարունակ նուազել: Երբ ԺԴ· դարում պապական իշխանութիւնը փոխադրուեց Ավինեօն, Հռոմում ընդամէնը 17·000 բնակիչ էր մնացել: Պապերի վերադարձից յետոյ բնակչութիւնը դարձեալ աճել է, բայց երբ Կարոլոս Ե-ի (Charles Quint) աւազակախմբերը քաղաքը կրակի տուին, նորից իջաւ մինչեւ 20·000-ի: Մեր դարում, երբ Գարիբալդիականները 1870-ին քաղաքը գրաւեցին, Հռոմ ունէր միայն 226·000 բնակիչ, իսկ հիմայ, ինչպէս տեսանք, արդէն 900·000:

Հռոմ այցելողները շատ լաւ ճանաչում են քաղաքը շրջապատող պարիսպի գօտին, նրա հին պատերի շրջանակն, որ խնամքով պահպանուած է մինչեւ հիմայ: Այժմ այդ հին շրջանակից դուրս նոր թաղեր, նոր արուարձաններ են բարձրացել եւ դեռ շարունակում են բարձրանալ քաղաքի զանազան կողմերում, լայն փողոցներով, ծառուղիներով եւ ժամանակակից առողջապահական կանոնների պահանջած պայմաններով: Հռոմ ոչ միայն մեծանում է, այլ գեղեցկանում է թէ՛ ժամանակակից ոճով գեղեցիկ շէնքերով եւ թէ՛ հին ճարտարապետական գլուխ-գործոցներն ի յայտ բերելով:

Բաղում հին տներ հիմնայատակ են անում Կապիտոլի եւ Ազգային Յիշատակարանի տեսքը գեղեցկացնելու համար, որովհետեւ նրանք շատ էին կորցնում այդ անպէտք հնութիւնների մերձաւորութիւնից:

Այն հրապարակն, որտեղից գնում ենք դէպի Հայ Դպրոցն ու եկեղեցին, կոչւում է Piazza Barberini, յանուն հինաւուրց Barberini ազնուական ընտանիքի: Բայց Բարբերինիների մեծաշուք հին պալատը չէր երեւում հրապարակից. նա մինչեւ հիմայ թաղնուել էր անշուք պատերի եւ տների ետեւը: Հիմայ այս արգելքներն անողորմ կերպով դետին են փլել եւ Բարբերինի պալատն իտալական գեղարուեստի իր ամբողջ շուքովն երեւան է եկել եւ հրապարակին գեղեցկութիւն է տուել: Եւ այսպէս այն ամէն հին շէնքերն, որոնք ինքնին պատմական նշանակութիւն չունին եւ հռչակաւոր հնութիւններ կամ նշանակալից նոր շէնքերի տեսքն են արգելում, անողորմաբար վար են առնւում, քանդւում են:

Մուսոլինիի եւ իր աշխատակիցների անսպառ եռանդի եւ բարձր հայրենասիրութեան շնորհիւ Իտալիան վերջին տարիներն անկասկած զգալի յառաջդիմութիւն է արած տնտեսական եւ քաղաքական ասպարէզներում. բայց ոչինչ այնքան փայլ է տուած Մուսոլինիին եւ ամբողջ Իտալիան իր հմայքի տակ միաւորած, որքան Հռոմէական Եկեղեցու հետ նրա կապած դաշնագիրը, որով վերջ է տրւում 59 տարուց ի վեր տեւող եւ անլուծելի համարուած Հռոմէական Հարցին եւ միլիոնաւոր բարի կաթոլիկ եւ միանդամայն ջերմ հայրենասէր իտալացիներ գտել են իրենց խղճի անդորրութիւնը: Երբ Մայիս 9-ին (1929) իտալական Սենատում կարդացուեց արքայական բացման ճառն, որ յայտարարում էր Պապի հետ կայացած համաձայնութիւնը, անվերջ

ծափահարութիւններ տեղացին ամէն կողմից եւ որոտացին կեցցէներ ուղղուեցան թագաւորի, թագաժառանգի եւ Մուսոլինիի հասցէին։ Ոտք ելաւ Հռոմի նշանաւոր ազնուական տոհմի ներկայացուցիչ ծերունի իշխան Prospero Colonna եւ յուզուած ձայնով իր մեծ դոհունակութիւնը յայտնեց, «որովհետեւ, ասաց նա, ինձ նման՝ տասնեակների երկար շարքի տխուր առաւելութեամբ օժտուած անձերն, որոնք Հռոմէական Հարցի բոլոր շրջաններին ականատես են եղած, չափազանց անձկութեան մէջ էին անցընում իրենց օրերը. նրանք տառապում էին սարսափելի հակասութեան մէջ, մի կողմից կրօնական հաւատքի եւ միւս կողմից հայրենիքի սիրոյ ընդհարման մէջ դտնուելով։ Իսկ հիմայ վերջապէս գտանք մեր սրտի խաղաղութիւնը»։ Եւ նա դառնալով դէպի Կառավարութեան Պետը մեծ ոգեւորութեամբ արտասանեց. «Պատի՛ւ Ձեզ, ո՛վ Բենիտո Մուսոլինի. սա մի անկեղծ աղաղակ է այն մարդու սրտից բղխած, որ տարիքի մեծ բեռան տակ ճնշուած իր սրտագին խնդութիւնն է յայտնում եւ ապահով է միանդամայն, որ հաւատարիմ թարգման է հանդիսանում իր բոլոր քաղաքակիցների երախտագիտական զգացմունքին...»։

Սրտաշարժ էր տեսարանը։ Միահամուռ ծափահարութիւններ եւ ջերմագին խնդակցութիւններ ծածկեցին ծերունի իշխանի խօսքերը։ Հարկ չմնաց նոր ճառի. Սենատը միաձայն ընդունեց արքայական ճառի պատասխան ուղերձը։

Այն օրն, այնուհետեւ, ես գնացի Լատերանեան պալատը, տեսնելու այն դահլիճն ուր ստորագրուած էր այդ նշանակալից դաշնագիրը։ Ընդարձակ սեղանի շուրջը դարսուած մնում էին դեռեւս, փետրուար ամսից ի վեր, այն ոսկեզօծ աթոռներն որոնց վրայ նստել են երկու կողմի լիազօրները. մէջ տեղի երկուքը քով քովի՝ Մուսոլինիին ու կարդինալ Գասպարիին էին, երկու գլխաւոր լիազօրներին, որոնք ստորագրել էին մէկը յանուն Իտալիոյ արքայ Վիկտոր Էմմանուէլ Գ.ի եւ միւսը Հռոմէական Եկեղեցու պետ Պիոս ԺԱ. պապի։ Սեղանի վրայ դրուած էր ոսկեզօծ մեծ թանաքամանը բայց գրիչ չկար։ Այն միակ ոսկէ գրիչն, որով ստորագրել էին պատմական դաշնագիրն եւ յարակից թղթերը, կարդինալ Գասպարի ընծայել է Մուսոլինիին իբրեւ յիշատակ։ Ինչպէս յայտնի է այդ դաշնագրի հետ միաժամանակ կնքուած է նաեւ մի Համաձայնագիր (Concordat), որի պայմաններն եթէ լիապէս ի գործ դրուին ամբողջ Իտալիան կը վերածուի կաթոլիկ պետութեան (Etat catholique), առանց ճնշում գործ դնելու միւս դաւանութիւնների վրայ. իսկ Նոր Հռոմը պահպանում է իր դիրքն իբրեւ միջազգային կաթոլիկութեան մայրաքաղաք, ինչպէս որ էր պապերի աշխարհական իշխանութեան ժամանակ։ Այս հանդամանքը դերակշռող դեր է կատարել դաշնադիրներից մի կողմի, Պիոս ԺԱ.ի եւ կարդինալ Գասպարիի համար։ Նոյնը չէ կարելի ասել միւս կողմի, Վիկտոր Էմմանուէլ Գ.ի եւ Մուսոլինիի համար, որոնց մտքում Իտալիայի արտաքին մեծութեան ձգտումն եւ առհասարակ հայրենասիրական քաղաքական զգացմունքն էր տիրապետող հանդիսանում։ Այսպէս թէ այնպէս, համարեա թէ բովանդակ Իտալական ազգը, չատ չնչին բացառութեամբ, իր լիուլի հաւանութիւնն է տուել կայացած համաձայնութեան եւ ֆաշիստական կառավարութեան գործելակերպին, ինչպէս վերջին քաղաքական ընտրութիւնները դերազանցօրէն ապացուցին։

Պ. Մուսոլինիին մենք էլ երախտապարտենք, որովհետեւ յարմար առթից օգտուելով մերոնք Հռոմում աղերսագիր էին ներկայացրել նրան եւ նա յօժարակամ նուիրել է Իտալական զանձարանի արտակարգ մի աղբիւրից՝ չատ խոշոր մի գումար, այն է մէկ միլիոն լիրէ, հայ-կաթոլիկ մայրապետների հաստատութեան, որտեղ խնամւում եւ դաստիարակւում են հայ նահատակների որբերն ու որբուհիները...։

Գ.

Վատիկան Միջնաբաղաքը (Cité du Vatican)։

Պապական իշխանութիւնը (la Papauté) ծնունդ է առած իրապէս Հռոմի դետնափորերում (catacombes), բայց այնքան հաստատ էր նրա հիմը, որ ոչ Հռոմէական հարակապետութիւնն իր forumներով, ո՛չ կեսարներն իրենց պալատներով եւ ոչ նոյնիսկ Բարբարոսներն իրենց պարբերական արշաւանքներով չեն կարողացած խախտել ու ընկճել նրան։ Նա դիմացել է Միջին-

դարի մրրիկներին, դիմադրաւել է զանազան փիլիսոփայական վարդապետութիւններ, եւ այսօր չնայելով մեր նիւթապաշտական դարի յառաջխաղացումներին այդ իշխանութիւնն աւելի ուժեղ է քան երբ եւ իցէ: Միայն թէ այժմ հոգեւորն է նրա հոգածութեան առարկան, որի պահպանութեան եւ ուժեղացման համար է, որ Պապութիւնը հրաժարուեց աշխարհական իշխանութիւնից եւ գոհացաւ այն փոքրիկ հողային տարածութեամբ, որ կոչւում է «Վատիկան Միջնաքաղաք» (Cité Vaticane), իբրեւ անհրաժեշտ նշան իր անկախութեան: Այս հոգեւորն ի նկատի ունէր Պիոս ԺԱ· երբ Յուլիսի 25ին առաջին անգամ իր կամաւոր արգելանքից դուրս ելաւ քաղաք: Այդ օրը նա արտաքին աշխարհին երեւցաւ ոչ իբրեւ Վատիկանի վեհապետ այլ իբրեւ «ծառայ ծառայից Աստուծոյ» իբրեւ երկրպագու Քրիստոսի, գլուխը բաց եւ ծնկաչոք: Այս խոնարհութեան ցոյցի մէջ էր, որ պապը դառաւ իր իսկական մեծութիւնը:

Արտակարգ անձնաւորութիւն է Պիոս ԺԱ·: Նա իրաւամբ կոչւում է «Առաքելութիւնների պապը» (le pape des missions), որովհետեւ իր մեծագոյն ուշադրութիւնը դարձրել է առաքելութիւններին: Այդպէս չէր նա իր երիտասարդութեան ժամանակ: Երբ նա պարզապէս Աբբայ Ռատտի (Abbé Ratti) էր, իր ազատ ժամերը նուիրել էր լեռների վրայ մագլցելուն, սրանում էր դէպի Mont Rote, Mont Cirvin եւ Mont Blancի գագաթներն, որոնց վրայ իր դիտողութիւններն առանձին գրքով էլ հրատարակած է: Իսկ այսօր երբ հոգեւոր կեանքի վերին գագաթիցն է նա խօսում, նրա ճառերի մէջ յաճախ երեւում են պատկերներ, դատողութիւններ եւ բաղդատութիւններ, որոնք արդիւնք են իր ալպինիստի (alpiniste) յիշողութիւններին:

Երբ այս տարի (1929) Պիոս ԺԱ· բանալ տուաւ Portone di bronzeն Վատիկանի Բրոնզեայ դուռն, որ փակ էր 1870ից ի վեր, նա տօնում էր Լատերանեան դաշնագրի հետ միասին, նաեւ իր քահանայութեան յիսնամեակն եւ այս երկու պարագան միասին բիւրաւոր ուխտաւորներ կամ այցելուներ էին բերել Յաւիտենական Քաղաքը:

Փոքր է Միջնաքաղաքը, շատ փոքր, բայց նրա ամէն մի ափ տեղն ունի իր հոյակապ անցեալն, իր մեծութիւնն ու հեղինակութիւնը: Վատիկանի բլուրի ստորոտի վրայ էր գտնւում Ներոնի ցիրկը, հազարաւոր քրիստոնեաների նահատակութեան թատերավայրը: Այստեղ է խաչուած Պետրոս Առաքեալ, որի գերեզմանի վրայ նախ մի համեստ դամբարան է կառուցուել, յետոյ եկեղեցի եւ վերջապէս այն փառահեղ շինութիւնն, որ «Ս· Պետրոսի Մայր Եկեղեցի» անուանն է կրում, ամբողջ աշխարհին յայտնի, եւ որի շուրջը հետզհետէ պալատներ եւ բնակութեան համար տներ են կանգնել: Եւ որովհետեւ պապերի այս բնակատեղին Թ· դարում յարձակման եւ կողոպուտի է ենթարկուել, ուստի ապագայ նոր աւարառութեան դէմ պաշտպանուելու համար պապերը զանազան ինքնապաշտպանութեան միջոցներ են ձեռք առել, որից սկսել է պապական աշխարհական իշխանութիւնն, որ կամաց կամաց Եկեղեցու Պետութեան ձեւի տակ իր իրաւասութիւնը ընդարձակելով տարածել է մինչեւ Իտալիայի կենդրոնական գաւառները, իսկ այժմ, 12 դար յետոյ վերածուած է դարձեալ իր նախնական գիրքին:

Վատիկանի պալատն իսկապէս պատկանում է ամբողջ կաթոլիկ աշխարհին, որովհետեւ ամէն երկրի կաթոլիկներն այս կամ այն ձեւով մասնակցել են նրա շինութեանն եւ ներքին բովանդակութեանը:

Այդ հրաշակերտ Ս· Պետրոսի տաճարը իր մատուռներով, այդ Վատիկանի ամենաճոխ թանգարանները եւ բոլոր այդ լոջաները, ստանցէները, ֆրէսկներն եւ գեղարուեստի հաղուագիւտ հաւաքածոները, որոնք մարդկային հանճարի ամենաբեղուն արդիւնքն են, ընդհանուր Հռոմէական Եկեղեցու, այսինքն երեքհարիւր միլիոն հաւատացեալների սեպհականութիւնն են, առանց երկրի եւ ազգի խտրութեան: Զմոռնանք, որ Վատիկան աշխարհիս ամենամեծ պալատն է, եթէ ի նկատի ունենանք բոլոր այն կից շինութիւններն, որոնք նրա մասն ու թեւերն են կազմում:

Վատիկան Միջնաքաղաքն անկախ տէրութեան գիրքն ստանալուց յետոյ սկսել է բազմաթիւ փոփոխութիւններ մտցնել իր մէջ, ժամանակակից պահանջներին գոհացում տալու համար: Ինչպէս տեսայ հարիւրաւոր բանուորներ էին աշխատում այնտեղ եւ հաւատացնում էին թէ նորոգութիւնները կատարւում էին նոյն ինքն պապի

վերին հսկողութեան տակ: Արդէն San Damaso հրապարակի վրայ նամակատուն եւ հեռագրատուն է հաստատուած, որով այլ եւս հարկ չէ մնում իտալականին դիմելու: Վատիկանը պիտի ունենայ իր յատուկ T. S. F., անթել հեռագրի կայարանը եւ իր երկաթուղու կայարանը՝ անմիջական յարաբերութեան մէջ դնուելու համար արտաքին աշխարհի հետ: Այս կերպով ճանապարհորդները պիտի կարողանան ուղղակի Վատիկան գալ, թէեւ մի՛շտ Հռոմից անցնելով եւ Հռոմ բնակելով, որովհետեւ Միջնաքաղաքը պանդոկներ չէ շահագործում: Վատիկան պիտի ունենայ նոյն իսկ իր օդանաւն ու օդագնացութեան կայարանը: Արդէն հիմայ էլ քիչ չեն հոգեւորականներ, նոյն իսկ կարդինալներ, որոնք օդային սաւառնակներով են ճամբորդում:

Վատիկան Միջնաքաղաքն ունի իր Օրէնքներն, որոնք են նախ Եկեղեցական Օրինագիրքը (Codex juris Canonici) եւ ապա նոր Պետական Հիմնական օրէնք, որ հաստատուած է 1929 Յունիս 7ին: Այն բոլոր պարագաներում, երբ այս կրկին օրէնքներով չեն նախատեսուած, իտալական քաղաքացիական եւ առեւտրական օրէնքները պիտի գործադրուին, եթէ ի հարկէ նրանք եկեղեցական կանոնների դէմ չեն: Պապը կամ նրա կողմից նշանակուած հոգեւոր եւ աշխարհական ատեանները կարող են, երբ հարկն զգացուի, նոր օրէնքներ եւ կանոններ եւս հրատարակել, կանխապէս Պապից հաստատուելու պայմանով, որոնք իրենց հրատարակման օրից 7 օր յետոյ գործադրութեան պէտք է դրուին: Այս ձեւով Վատիկան Միջնաքաղաքն երկու իրաւական բնոյթ ունի. նախ հոգեւոր իբրեւ կաթոլիկութեան կենդրոն, կամ ինչպէս Պիոս ԺԱ. ասել է իբրեւ «հոգիների միջնաքաղաք» (Cité des âmes) եւ երկրորդ աշխարհային: Երկուսի էլ վերին ղեկավարութիւնը գտնւում է պապի ձեռքում, որ բացարձակ միապետ է, եւ իր իրաւունքներն եւ իշխանութիւնը փոխանցում է իր կողմանէ նշանակուած իշխանութիւններին: Երկու նոր բարձր պաշտօնեայ կայ Վատիկանում, երկուսն էլ աշխարհական, մէկը Միջնաքաղաքի Կառավարիչ (Gouverneur), միւսը Ընդհանուր խորհրդական կոչումով:

Վատիկանի քաղաքացիութեան կամ հպատակութեան խնդիրն այսպէս է կարգադրուած: Վատիկանցի է համարւում նա ով որ պաշտօն է վարում եւ բնակւում է այնտեղ: Երբ պաշտօնեան կամ այլ անձ որ բնակւում էր այնտեղ, թողնում հեռանում է, նա դադարում է Վատիկանցի լինելուց եւ վերադառնում է իր նախկին հպատակութեան: Հետեւաբար Վատիկանում բոլոր գործող անձինք երկու հպատակութիւն ունին:

Վատիկանն այժմ ընդ ամէնը 523 քաղաքացի ունի, իբրեւ ներքին պաշտօնեայ: Պապական պահակներից նրանք, որոնք ծառայում են Վատիկանում, բայց այնտեղ չեն ապրում, այլ իրենց ընտանիքներով Հռոմում են բնակւում, Վատիկանի քաղաքացի չեն հաշւում:

Գալով Վատիկանի Ելեւմուտքին (Budget) Պապը՝ նախկին Եկեղեցական երկրից հրաժարուելու փոխարէն, Լատերանեան դաշնագրով Իտալական կառավարութիւնից ստացել է մի մեծ դրամագլուխ, որի տարեկան տոկոսն է ութսունը ութ (88) միլիոն լիրէ: Բացի դրանից կան նախկին եկամուտներն, որոնց մէջ գլխաւորն է «Ս. Պետրոսի լուման», աշխարհիս ամէն կողմից ուղարկուած բարեպաշտական նուէրները: Այս դրամարներից Վատիկան նպաստներ է բաժանում նոյնպէս աշխարհի ամէն կողմը, կրօնական կարօտ հաստատութիւններին եւ այլ բարեգործական նպատակների: Հայ-կաթոլիկ նուիրապետութիւնն էլ կանոնաւորապէս օգտւում է այդ նպաստներից:

Պէ՞տք է ասել, որ Վատիկանում որ եւ է մաքստատուն չկայ, եւ ամէն տեսակ իրերի մուտքն ու ելքն ազատ է:

Պապական իշխանութիւնը Վատիկանից դուրս էլ կալուածներ ունի, որոնց գլխաւորն է Հռոմ քաղաքում Լատերանեան պալատը, ընդարձակ հինաւուրց շինութիւն, բազմատեսակ եկեղեցական նպատակների յատկացուած, որին կից է San Giovanni մայր եկեղեցին, որ համարւում է պապի՝ իբրեւ Հռոմի Եպիսկոպոսի՝ թեմական եկեղեցին: Այստեղ է հանդիսում Հռոմի հայկական հաստատութեան բարերար Լեւոն ԺԳ. պապն, ըստ իր յայտնած բաղձանքի, մի գեղեցիկ դամբարանում: Իսկ նրա գլխաւոր աշխատակիցը, ամբողջ 20 տարի նրա արտաքին քաղաքականութիւնը վարող եւ Վատիկանի դիրքն ու հեղինակութիւնը մեծապէս բարձրացնող կարդինալ Բամպոլլան

կամեցել է մօտենալ սկզբնական Եկեղեցու մարտիրոսներին եւ թաղուած է առաջին հռոմայեցի վկայուհու Սէսիլի (Cecile) կողքին, Transtevere-ում։

Ցիշեմ վերջապէս, որ Վատիկանն ունի նաեւ մի տեսակ Դերագոյն Խորհուրդ յանձին Սրբազան Դպրոցի (Sacré Collège), որ բաղկացած է կարդինալներից։ Սրանց թիւն այս միջոցին ընդ ամէնը 57 է, որոնց 25ը միայն Վատիկանում կամ Հռոմում են գտնւում. մնացածները կա՛մ իբրեւ պապական նուիրակ (nonce) եւ կա՛մ իբրեւ տեղական հոգեւոր իշխանութեան բարձրագոյն պետ՝ ցրուած են զանազան երկիրներում։ Այս 57 կարդինալից 27 իտալացի են եւ 30 օտարազգի։

Հին Հռոմ։ Հռոմում իմ վերջին այցելութիւնս տուի Հռոմի օրորոցին։ Այսպէս է կոչւում դիրքով համեմատաբար փոքր բայց իր պատմական նշանակութեամբը շատ մեծ՝ Պալատինեան բլուրը (Palatinat)։ Նրա ստորոտումն է տարածուած հանրածանօթ Հռոմէական Ֆորումը[17] (Forum Romanum)։ Այս բլուրի վրայ է, որ Latium-ի լեռներից իջած հովիւները առաջին անգամ սկիզբ դրին Լատին քաղաքին եւ ապա նրանց պետը՝ Հռոմուլոս (Romulus) այդ հովիւների խումբը կազմակերպելով, եւ փոքրիկ աւանը պարսպով պատելով հիմնարկեց Հռոմը, 747ին (Ն. Ք.)։

Հռոմուլոսի յաջորդները՝ հետզհետէ մերձակայ միւս բլուրներն էլ գրաւելով եւ այնտեղի բնիկներին իրենց հպատակեցնելով քաղաքն ընդարձակել են։ Խեղճ լատին հովիւների այս նախնական աւանի վրայ հռոմէական կայսրները Օգոստոսից սկսած մեծամեծ պալատներ են կառուցել եւ նա դարձել է Palatinat (իտալ. Palatino)։ Այժմ այդ պալատներն ու նրանց կից տաճարներն եւ այլ շէնքերը կանգուն աւերակներ են, ծառաստանով զարդարուած։ Palatino-յի եւ մերձակայ Aventino բլուրի մէջտեղի հովիտումն է հսկայական Coliseum-ը, որ իր կիսաւեր վիճակումն էլ շատ խոր տպաւորութիւն է անում։ Նրա պատերի քարերը, ինչպէս եւ Հռոմի հին տաճարների քարերը, քաղաքի բազմաթիւ պալատների եւ այլ շէնքերի կառուցման են ծառայել։ Ի մէջ այլոց Ֆրանսական դեսպանատան շէնքը (Palais de Farnèse) Կոլիզէումի քարերով է շինուել։ Այդ հովիտում Coliseum-ից դատ կային ուրիշ ցիրկեր եւս, որոնք դեռ հողի տակ են ծածկուած։ Palatino-յի բարձրաւանդակում մի մեծ հրապարակ կայ, ուր հռոմէական կայսրները նստում էին եւ այնտեղից դիտում ցիրկի խաղերը։

Այդ ցիրկերն անհրաժեշտ էին Հռոմի ժողովրդի «հաց եւ խաղ» (panem et circenses) պահանջին գոհացում տալու համար։ Այդ «խաղերից» մէկն էր նաեւ քրիստոնեաների յօշոտումը գազանների ձեռքով։ Նստայ ես էլ այնտեղ, պայծառ արեւի ճառագայթների տակ եւ միտքս թռաւ դէպի այդ հինաւուրց հռոմէական «զուարճութիւնները»։ Հազարաւոր քրիստոնեաներ են զոհուել այնտեղ, որոնց նկարագրութիւնն այնպէս կենդանի կերպով պահել են մեզ համար հռոմէական պատմագիրները Սուետոնիոս, Տակիտոս եւայլն, եւ նորերից լեհացի վիպասան Սենկեվիչ[18]։ Բայց որչափ էլ սարսափելի լինին նրանց նկարագրած տանջանքները, դրանք նսեմանում են վերջին ահռելի աղէտի ժամանակ հայկական զոհերի կրած չարչարանքների առջեւ։ Մեծապէս իրաւունք ունէր դրելու Կ. Պոլսի ամերիկեան դեսպան Մորգնատաու թէ «Դեսպանատուն հասած տեղեկագիրներում յիշատակուած դէպքերը գերազանցում են տիեզերքի պատմութեան մէջ գրուած կամ երեւակայուած ամէնից անասնական եւ ամէնից գեհենային անգթութիւնները...»։ Եւ իրօք առաջին դարի քրիստոնեաներին իսկական գազաններն են յօշոտել, իրենց բնազդին հետեւելով։ Իսկ քսաներորդ դարի մեր հաբիւրապատիկ աւելի նահատակներին գազանացած մարդիկն են յօշոտել արիւն, արիւն աղաղակելով, ոմանք քրիստոնէի արիւն, ոմանք հայի արիւն, շատերն էլ երկուսը մէկտեղ պահանջելով...։

ՍԱՐՈՒԽԱՆ

[17] Հռոմում ուրիշ forum-ներ էլ կան։ Դրանից մէկն է Տրայանոսի անունով կոչուածը, որ այսօր, ինչպէս տեսայ, կատուների բնակավայր է դարձել, որոնց պահպանութիւնն իրենց վրայ են վերցրել շրջապատում բնակող իտալացիք։

[18] Հէնրիկ Սենկեվիչի դրած նշանաւոր վէպն է լեհերէն Կամօ-Գրէադէյէ = Quo vadis, որի հայերէն թարգմանութիւնն էլ ունինք, «Ցո՞ երթաս» մակագրով, տպ. Թիֆլիսում։